Հաստատված է

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության

2021 թվականի սեպտեմբերի 14-ի 338-Լ որոշման

Գործում է սկսած 2021 թվականի սեպտեմբերի 20-ից

Տեղեկատվական ամփոփագիր

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:
Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք Բանկի կայքում, խնդրում ենք ուշադրություն դարձնել տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին:
Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք թղթային տարբերակով, մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք այցելել Բանկի ինտերնետային կայք՝ www.idbank.am հասցեով (ուշադրություն դարձնելով տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին), դիմել Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել Բանկի Հեռախոսազանգերի կենտրոն՝ (+37410) 59 33 33 , (+37460) 27 33 33 հեռախոսահամարներով:

ԱՇԽԱՏԱՎԱՐՁԱՅԻՆ ՓԱԹԵԹՆԵՐ՝ IDSALARY, IDSALARY+		
Ընդհանուր պայմաններ		
	1. Քարտերի տրամադրման, սպասարկման պայմաններ	
1.	**Փաթեթի շրջանակում տրամադրվող քարտերի տեսակներ**[1]	Mastercard Standard Visa Gold
2.	**Քարտային հաշվի սպասարկման տարեկան վճար**	Mastercard Standard – անվճար Visa Gold – 2 000 ՀՀ դրամ տարեկան
3.	**Միջնորդավճար քարտով Բանկի բանկոմատներից կանխիկի տրամադրման համար**[2]	Mastercard Standard – 0% Visa Gold – 0%
4.	**Միջնորդավճար ԱրՔա համակարգի այլ բանկերի բանկոմատներից**	Mastercard Standard – 1% Visa Gold – 1%

	կանխիկի տրամադրման համար	
5.	**Արտարժույթով 2-րդ քարտային հաշվի սպասարկման տարեկան վճար**	50% զեղչ՝ Բանկում գործող Visa Gold կամ Mastercard Standard քարտերի քարտային հաշվի սպասարկման տարեկան վճարից: Քարտային հաշվի տրամադրման և սպասարկման այլ պայմանները սահմանվում են Visa Gold կամ Mastercard Standard քարտերի տեղեկատվական ամփոփագրերի համաձայն:
6.	**Քարտային հաշվի քաղվածքի լրացուցիչ տրամադրում Բանկում, փոստի կամ էլ. փոստի միջոցով**	Անվճար
7.	**Visa Signature քարտային հաշվի սպասարկման տարեկան վճար**	50% զեղչ՝ Բանկում գործող Visa Signature դեբետային կամ կրեդիտային քարտերի քարտային հաշվի սպասարկման տարեկան վճարից: Սույն պայմաններով քարտի տրամադրման որոշումը կայացվում է Բանկի կողմից: Քարտային հաշվի տրամադրման և սպասարկման այլ պայմանները սահմանվում են Visa Signature դեբետային կամ կրեդիտային քարտերի տեղեկատվական ամփոփագրերի համաձայն
8.	**Այլ պայմաններ**	Քարտի տեսակից կախված համապատասխանաբար Բանկում գործող . • Դեբետային վճարային քարտերի տեղեկատվական ամփոփագրի • Կրեդիտային վճարային քարտերի տեղեկատվական ամփոփագրի • Mastercard վճարային քարտերի տեղեկատվական ամփոփագրի
•	**2. Վարկեր/վարկային գծեր**	
9.		**14% - 16%**

	Տարեկան անվանական տոկոսադրույք	Եթե հաճախորդը հանդիսանում է. • Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործող կազմակերպության աշխատակից • Պետական ոլորտում գործող կազմակերպության աշխատակից • 1-ից 500 (ներառյալ) խոշոր հարկ վճարող կազմակերպության աշխատակից
		15% -16% Եթե հաճախորդը չի հանդիսանում վերոնշյալ ոլորտների աշխատակից
10.	**Տարեկան փաստացի տոկոսադրույք**	**14.93% - 17. 67%**
		16. 08% -17. 67%
11.	**Այլ պայմաններ**	Համաձայն Բանկում գործող **Պրոֆի վարկավորման պայմաններ տեղեկատվական ամփոփագրի**
3. Պահատեղերի վարձակալություն		
12.	**Վարձակալության սակագին**	20% զեղչ՝ Բանկում գործող **Պահատեղերի վարձակալության պայմաններին** համապատասխան
13.	**Այլ պայմաններ**	Համաձայն Բանկում գործող **Պահատեղերի վարձակալության պայմանների**
4. Հեռավար Ծառայություններ		
14.	**Online/Mobile բանկինգ**	Անվճար
5. Rocket Line		
15.	**Սահմանաչափ**	Զուտ աշխատավարձի մինչև տասնմեկապատիկի³ չափով՝ առավելագույնը 10 000 000 ՀՀ դրամ:

16.	**Պայմաններ**	Համաձայն Բանկում գործող Rocket Line վարկի/վարկային սահմանաչափի տեղեկատվական ամփոփագրի
	6. Փաթեթի տրամադրման պայմաններ	
16.	**IDsalary և IDsalary+ փաթեթի տրամադրման պայմաններ**	Փաթեթը տրամադրվում է ֆիզիկական անձ հաճախորդներին, ովքեր աշխատավարձը նախատեսում են ստանալ/ստանում են Բանկի միջոցով՝ անկախ գործատուի հետ համագործակցության պայմանագրի առկայությունից: Փաթեթից օգտվելու համար նվազագույն աշխատավարձ է համարվում եռամսյակում 200 000 ՀՀ դրամ զուտ աշխատավարձի ստացումը Բանկի միջոցով
17.	**IDsalary փաթեթի միացման վճար**	Անվճար
18.	**IDsalary+ փաթեթի միացման վճար**	6 000 ՀՀ դրամ միանվագ: Փաթեթը ներառում է սույն տեղեկատվական ամփոփագրի՝ **IDsalary** փաթեթի բոլոր ծառայությունները, ինչպես նաև **«Ֆինանսների ապահովագրություն»** ապահովագրատեսակը, որը տրամադրվում է մեկ տարի ժամկետով: Ապահովագրության պայմանները սահմանվում են համաձայն «Նաիրի ինշուրանս» ԱՓԲԸ համագործակցության պայմանների:
19.	**Փաթեթի ամսական սպասարկման վճար**	Անվճար

[1] Փաթեթն ակտիվացնելու՝ աշխատավարձը սույն տեղեկատվական ամփոփագրի 1-ին կետով սահմանված քարտերից տարբերվող Բանկի այլ քարտին/հաշվին ստանալու դեպքում գործում է նշված քարտի/հաշվի Բանկում գործող տրամադրման և սպասարկման պայմանները, սակայն հաճախորդը միաժամանակ կարող է օգտվել IDsalary, IDsalary+ փաթեթների 5-ից 19-րդ կետերում սահմանված արտոնյալ պայմաններից:

[2] Սույն սակագինը գործում է օրացույցային ամսվա ընթացքում հաշվից մինչև 1,000,000 ՀՀ դրամ (համարժեք արտարժույթ) ելքագրումների դեպքում: Սահմանաչափը գերազանցելու դեպքում գործելու է 1% կանխիկացման միջնորդավճար: Նշված սակագինը տարածվում է 20. 09. 2021թ-ից նոր պատվիրված քարտերի, ժամկետային վերաթողարկումների համար:

[3] Ընդ որում, զուտ աշխատավարձի չափով Rocket line սահմանաչափ տրամադրվում է այն դեպքում, եթե հաճախորդը չունի ժամկետանց ընթացիկ պարտավորություն, ռիսկի դասը ստանդարտ է և առկա է Նորք

սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոնից աշխատավարձի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն: Ընդ որում, նվազագույն միապատիկ զուտ աշխատավարձի չափով Rocket line սահմանաչափը տրամադրվում է մինչև 3 աշխատանքային օրվա ընթացքում:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Փաթեթի տրամադրման համար հիմք է ընդունվում հաճախորդի գրավոր համաձայնությունը:
2. Սույն տեղեկատվական ամփոփագրում սահմանված արտոնյալ պայմանների տրամադրման և սպասարկման համար Բանկի կողմից կարող են իրականացվել պարբերական ստուգումներ և ստուգման արդյունքում աշխատավարձի ստացման բացակայության դեպքում Բանկն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխել պրոդուկտի/ծառայության տրամադրման և սպասարկման պայմանները՝ համաձայն Բանկում գործող սակագների:
3. Հաճախորդի կողմից փաթեթից հրաժարվելու դեպքում փաթեթում ընդգրկված ծառայությունները մատուցվում են համաձայն Բանկում գործող սակագների:
4. Կողմերի միջև ծագած վեճերը կարող են լուծվել դատական կարգով կամ ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով («ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով), հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ, էլ. փոստ՝ info@fsm.am, հեռախոս՝ (+37460) 70 11 11, ֆաքս՝ (+37410) 58 24 21: Ընդ որում, եթե գույքային պահանջի չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, ապա ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները չեն կարող վիճարկվել Բանկի կողմից:
5. *Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է «Ճանաչիր քո հաճախորդին» սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկություններ:*
6. *Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (FATCA) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն՝ Բանկը հաճախորդի ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է լրացուցիչ տեղեկություններ հավաքագրել:*
7. *Հաճախորդը իրավունք ունի Բանկի հետ հաղորդակցվել իր նախընտրած տարբերակով՝ էլ. փոստ կամ փոստային կապ: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:*
8. Բանկի մասնաճյուղերի և բանկոմատների ցանկին, վերջիններիս գործունեության հասցեներին և աշխատանքային ժամերին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ Մասնաճյուղեր և բանկոմատներ:
9. Բանկի կողմից հեռավար սպասարկումն իրականացվում է IDBanking.am առցանց համակարգի միջոցով: Բանկի հեռավար սպասարկման ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները ներկայացված են «Հեռավար բանկային ծառայությունների մատուցման հրապարակային պայմաններում»:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ